ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/47
որոշման չկատրման վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ.-ին ներկայացվել է բողոք:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ քննության առնելով «Էյչէյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացրած բողոքը, 26.07.2019թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/47 որոշմամբ որոշել է ներկայացրած բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կետրոն» ՓԲԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**

Հեռ. (+374) 11 28 93 25, Էլ-փոստ. gbqa_ohanyan@mail.ru